

Հ. ԱՆՏԱՅԱՆ
ՀԱՅԻ ԳԱ ԽԱԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՈՒ

ՀԱՅԿԱԿԱՆՔ Գ (Armeniaca)¹

14. ՄԵՐ ԱՌԱՋԻՆ ՊԱՏՄԱԳՐԻՈՒ ԹՎԱԿԱՆԸ

Հայկական Ակադեմիայի առաջին ընդհանուր ժողովում, մեր բազմա-
հմուտ հայազետ և հայկական Ակադեմիայի իսկական անդամ Սա. Մալ-
խասյանը մի բաղմարովանդակ ելույթ ունեցավ հայոց ամենահին պատմա-
գրերի մասին, և մաթեմատիկական ճշմարտությունների նման իրարից
բխեցնելով՝ որոշեց նրանց դրույթյան թվականը։

Նա հիմք առավ Եդիշեն, որ խոսելով նախարարների դարձի մասին,
ասում է, որ նորից վերադառնալու է (ինձ դարձեալ դալ պիտի) այդ հար-
ցին։ Իայց գիրքը այդպես էլ մնում է. չի վերադառնում Եդիշեն իր խոս-
տացած հարցին և չի պատմում նախարարների դարձը։ Սրանից հետևում
է, որ Եդիշեն դրել է նախարարների դարձից քիչ առաջ։ Այսպիսով ճշտվում
է Եդիշեի դրույթյան ժամանակը, այն է՝ 461։

Փարպեցին Եդիշեից հետո է. նա ժամանակակից է Վահան Մամի-
կոնյանին, պատմում է նրա ապստամբությունը պարսից դեմ (481) մինչև
նրա մարդպան նշանակվելը (485), բայց չգիտե նրա մահը (505)։ Ուստի
գրված պիտի լինի 490-ական թվերին։

Եդիշեի մեջ ոչ մի հիշատակություն չկա Գրիգոր Լուսավորչի մասին.
նոյն իսկ այն տեղերում, ուր Եդիշեն պարտավոր էր խոսել նրա մասին,
դարձյալ ոչ մի ակնարկ չկա։ Լուսավորիչը ապրել է Եդիշեից շատ առաջ.
Բնիպես պետք է բացատրել այս լուրջությունը։ Ուրեմն Լուսավորչի «առաս-
պելը», որ հունական օրիննտացիայի ստեղծագործությունն է, դեռ այդ ժա-
մանակ հնարված չէր։ Եվ որովհետև Լուսավորչի պատմության հեղինակը
Ազաթանգեղոսն է, ուրեմն և Ազաթանգեղոսը գրված է Եդիշեից ուշ, այն է՝
461—465 թվերին։

Ազաթանգեղոսը ստեղծագործությունն էր հայոց մեջ գոյություն ունե-
ցող այն կուսակցության, որ հետևում էր հունական օրիննտացիային։
Իայց սրան հակառակ կար հայոց մեջ նաև մի ուրիշ կուսակցություն, որ
հետևում էր ասորական օրիննտացիային։ Այս կուսակցությունը տեսնելով,
որ իրենց հակառակորդները մի ուժեղ պաշտամունք ստեղծեցին, որոշեցին
մի ուրիշ «առասպել» էլ իրենք հնարել և հնարեցին Արդարի սուտ պատ-

¹ Սկզբը ասու չհեղեղագիրը 1944 թ. № 8-ում և 1945 թ. № 1—2-ում։

մաթյունը, նրա թղթակցությունը Քրիստոսի նետ, Թաղեոս առաքյալի գալը Հայաստան, ևն, Ասացին. եթե դուք մի լուսավորիչ կստեղծեք, մենք էլ ահա մի Առաքյալ կստեղծենք և կկապենք ուղղակի Քրիստոսի նետ, Տեսնենք ով կհաղթե:

Արդարի զրույցը իբրև պատասխան Աղաթանգեղոսի, պետք է ուրեմն զրված լինի նրանից նետո՝ 465—470 թվերին:

Փափստոսի մեջ թե Թաղեոս առաքյալի պատմությունը կա և թե Քրիստոսավորչի (յառաքելասպանն Սանատրկոյ մինչև...), ուրեմն և նա զրված է Աղաթանգեղոսից էլ ու Արդարու զրույցից էլ նետո, ուրեմն շուրջ 475 թվին:

Այս բոլորից նետո գրեց Խորենացին, որ սակայն չգիտի Վահանի ապստամբության պատմությունը. ուստի նրա թվականն էլ պետք է դնել 483—6 (Փափստոսի նման նա էլ ղիտակ է թե Արդարին և թե Լուսավորչին):

Այսպեսով ամփոփվում է մեր առաջին պատմագիրներին առջը հետեւվյալ ձևով.

Եղիշե 461.

Փարպեցի 490-ական թ.

Աղաթանգեղոս 461—465.

Արդարի զրույցը 465—470.

Փափստոս 475 թ.

Խորենացի 483—6.

Ամբողջ կառուցվածքը շատ զեղեցիկ է, և ինչպես ասացի, մաթեմատիկական հստակությամբ յուրաքանչյուրը բխում է մյուսից:

Կան սակայն մի քանի հարցեր, որոնք ծառանում են մեր դեմ և կասկած ներշնչում նրանց կապակցության մասին:

Այդ հարցերը հետևյալներն են.

1) Խորենացին գրել է 483—6 թվերին. ուստի նա տեսել էր թե Վարդանանց պատերազմը (451) և թե Վահանի ապստամբությունը (481). ինչու սրանց մասին ոչ մի ակնարկ չունի:

2) Փափստոսն էլ կանոնավոր Հայոց պատմություն է. նա գնում է Խոսրով Բ-ից մինչև Խոսրով Գ. զրված լինելով ըստ բանախոսի 475 թվին, նա տեսած պիտի լինի հայոց զրերի գյուտը. Արշակունյաց պետություն կործանումը և Վարդանանց պատերազմը. ինչու սրանց մասին ոչ մի ակնարկ չկա:

3) Այս հարցերը չեմ տալիս Աղաթանգեղոսի և Արդարու զրույցի մասին, որովհետև սրանք կեղծիքներ լինելով, իրենց ժամանակն էլ պիտի կեղծեին և պիտի ամփոփվեին մի միայն իրենց երևակայած շրջանում: Չեմ խոսում նաև Եղիշեի և Փարպեցու մասին, որոնք կանոնավոր շարանաբոված պատմություններ են:

4) Ստ. Մախասյանը մեկն է Կովկասի այն շատ սակավաթիվ հայագետ հայկաբաններից, որոնք ճանաչում և ընդունում են ոսկեդարյան և ոչ-ոսկեդարյան լեզուների, ինչպես և ոսկեդարյան զանազան զպրոցների տարբերությունը: Նա լավ գիտե, որ Արդարի զրույցը ոսկեդարյան լեզվով է. Աղաթանգեղոս և Փափստոս միևնույն զպրոցին են պատկանում և ոսկեդարյան են, Եղիշեն և Փարպեցին հետ-ոսկեդարյան են և իրար նման լեզու ունին, իսկ Խորենացին՝ իր ճշմարտան լեզվով, այս բոլորից նետո է:

Այսպես լեզվի հնագիտության համաձայն այս հեղինակները կազմում են հետևյալ շարքերը.

ա շարք.—Արգարու գրույցը.

բ շարք.—Փավստոս, Ազաթանգեղոս.

գ շարք.—Եղիշե, Փարպեցի.

դ շարք.—Խորենացի.

Առհասարակ ընդունված է, որ Ոսկեդարը վերջանում է 460 թվին, Բանախոսի տված թվականներից միայն Եղիշեն ու Փարպեցին են, որ համապատասխանում են զեված սահմանին. Արգար, Ազաթանգեղոս և Փավստոս գուրս են ընկնում սահմանից. այսինքն՝ ոչ-ոսկեդարյան են, մինչդեռ նրանց լեզուն, ինչպես գիտենք, հաստատապես ոսկեդարյան է. Անհարմար է նաև Խորենացին, որ իրրև հունարան լատինացի գործ, պետք էր որ ավելի ուշ լինէր, քան Փարպեցին.

5) Ծնթադրենք, թե մենք այժմ խախտում ենք 460 թվի սահմանը և տանում ենք ավելի առաջ, օրինակ, մինչև 475 թ.—այս դեպքում Արգարը, Ազաթանգեղոսը և Փավստոսը կՖեան Ոսկեդարի (նոր) սահմանում. բայց թե՛ կանենք Եղիշեն, իր լեզվով Եղիշեն Ազաթանգեղոսից. Արգարից ու Փավստոսից տեսլատեսառ հետո է, ուր մնաց թե նրանց ժամանակակից և նույն իսկ ավելի առաջ.

6) Խորենացին ըստ բանախոսի գրել է 483—6 թվերին. կյոր հաշվով դնենք 485 թ. գրած ժամանակ ենթադրենք 60 տարեկան էր. ուստի ծնվել է 425 թ., ուրեմն 40 տարեկան էր, երբ Ազաթանգեղոսը հնարեց Լուսավորչի առասպելը, և 45 տարեկան, երբ հնարվեց Արգարի գրույցը. Այդ Խորենացին տեսել ու ապրել էր այդ խաբերաների հետ. նա չէ՞ր բռնի նրանց օձիքից և չէ՞ր ասի. «Ա՛յ խաբերաներ, ինչու ձեզանից այդպիսի սուտ ու մուտ բաներ եք հնարում. ինչ Լուսավորիչ, ինչ Քաղեոս առաքյալ. ում եք ուղղում խաբել այդպիսի ստերով ևն»:

7) Փավստոսը Ազաթանգեղոսից 10 տարի հետո է և միայն 5 տարի հետո Արգարի գրույցից. նա նույնպես չէ՞ր բռնի այդ խաբերաններին և նրանց երեսով չէ՞ր տա նրանց արած կեղծիքը. Բայց նա, ընդհակառակը, երկուսի կեղծիքն էլ ընդունել է և իրրև ճշմարիտ անց կացրել իր Պատմության մեջ. Այս բոլորը խոսք մեկ են արել, թե՛ է, ստեր հնարելու և այդ ստերը կլլեցնելու:

8) Փարպեցին գրել է Ազաթանգեղոսից 25 տարի հետո և Փավստոսից էլ ընդամենը 15 տարի հետո. ուստի երկուսին էլ ժամանակակից է և տեսած կամ լսած պիտի լինի նրանց խաղախոսքյունը. Բայց ինչ ձևով է խոսում նրանց մասին.—Ուկիզբն առաջին գրող պատմութեանն Հայոց, որում ուկիզբն արարեալ պատմեալս Ետեւլիւ այրն Երեմեյի Ազաթանգեղոս, սկսեալ ի մահուն Լկրուհանայ... զդարձ աշխարհիս Հայոց յանգիտութենէ կոապաշտութեան յաստուածգիտութեան նշմարտութիւն ի օեռն սրբոյ Մանուտակին Գրիգորիսի... Երկրորդ գրող սկիզբն արարեալ պատմելոյ ի կարգէ առաջին գրողն՝ զիրս բաղմափոփոխ աշխարհիս Հայոց, զբարեալ և դարեալ, զվարս և զգործս զարանց սրբոց և զպղծոց, զժամանակի պատերազմաց և զխաղաղութեան. Պատմեալ գայս ամենայն Փաւստոս Եմ. Բուզանդացի, մինչև ցթագաւորութիւնն Լկրակայ... Ընդ բազում ճառս մ.ստեմից թռաքնացն պատմադրացն Հայոց անցի. յորոց ըստ յերկար ընթերցողութեան կարգի 3—4.—4

նից առաջանալ, բայց կարող է նաև հաջորդ և ոնգականի պատճառով սաստկացած լինել:

Միևնույն բառի գոյությունը թէ՛ Պոլսի և թէ՛ Երևանի բարբառում, նշան է, թե բառը փոխ է առնված պարսկերենից այն ժամանակ, երբ դեռ պոլսեցիք Հայաստանում էին և պարսիկները Հայաստանի սահմաններից հեռացած չէին, այն է թրքական դաղձից ավելի առաջ:

16. ՅԱՏԱԿԻ

Այս բառի գրության մասին մի ժամանակ արևմտահայերը վիճում էին. ոմանք Կրում էին ցաթեի, ոմանք ցաթիլի, ոմանք ցատկիլ, Վերջինը արևելահայոց ընդունած միակ ձևն է: Գրաբարում այս բառը գոյություն չունենալով՝ այսպիսի վեճեր հնարավոր են: Օրինակ՝ «Հայ կայսերք Բիւզանդիոնի» գրքում, ապ. Վենետիկ 1905, հտ. Բ, էջ 123 կարդում ենք. «Յատկիլու, գնտակ խաղալու, նիգակ նեաեիլու, աղեղը լեցնելու և արձակելու են»: Ուղղագրությունը որոշելու միակ միջոցը բառի ծագումը գտնելն է:

Գիտենք, որ հյ. ց ծագում է հնիւ. sk և ks ձևերից հավասարապես. ուստի պետք է որոնել skad կամ ksad և skat կամ ksat ձևով մի արմատ: Գատարելով այս որոնումը, Walde-Pokorny բառարանում, հտ. Բ, էջ 538 գտա sqat «ցատկել, ստնուել, ստոստիլ*», որի վստահելի ժառանգներն են լո. scateo «ջրի գուրս ժայթքել կամ ցատկելը», հին լիթ. skalan «ցատկել, խոյանալ, ստնուել», հուն. (ըստ Հեսիքիոսի) εσταταμεν «խոյանալ, ստնուել»: Ernout-Meillet բառարանը (էջ 863) նույնպես հիշում է այս ձևերը, որոնց վրա ավելացնում է սլավական skoku «ոստիւն», որ է ուս. скакати, скачка են: Հայերենից հիշում է ցալտել կամ ցալթել, առանց սակայն պնդելու նրանց նույնության վրա:

Տարակույս չկա, որ մեր ցատկիլ բայը պատկանում է ճիշտ նույն արմատին. 1 կամ 11 հավասարապես տալիս են հյ. ք, ուստի հայերենի ճիշտ ձևն է ցաք-, որի վրա ավելանալով կ ածականը (հմտ. հարուլ և հարկանիլ), ստացվիլ է ցաթկիլ:

Այնուհետև բաղաձայնների աստիճանի հարմարեցմամբ՝ առաջացել են մի կողմից ցաթեիլ և մյուս կողմից ցատկիլ ձևերը:

17. ՅԱՂԹԵԼ

Ինկատի ունենալով $h = j$ փոխանակությունը հայերենում (ինչ. հինգ—յիսուն, հատանիլ—յօտել, հետ—յետ), կարող ենք ասել, թե այս բառի նախածայնն էլ իրավունք ունինք բացատրելու ինչպես հ:

Ըստ այսմ յուր արմատը պետք է ենթադրել palt կամ salt նախաձևից: Առաջինը գոյություն չունի. երկրորդը գտնում ենք լատիներենում. Լտ. saltus նշանակում է «ոստում», որի բայն է salto «պարել» > ֆրանս. sauter «ցատկել»: Այս բառը համարվում է ածանցված salio բայից, որը նախնական նշանակութունն է «ցատկել», ապա զանազան երանգավորումներով՝ «խոյանալ, պարել, նետվել, սիրտը բարախել, հուզվել, գուրս նետվել, ջուրը ժայթքել, հոսել, և վերջապես «saillir ou couvrir une femelle».

խառնք անասնոց, որ և ժղ. ծածկիլ (ճիշտ ինչպես ֆրանսերենում)։ Այս վերջին իմաստից էլ լատ. salax «լպիւրը, լիւրք»։

Walde, ինչպես նաև Walde-Pokorny 2, 505 և Ernout-Meillet 849 լատ. salio արմատական ձևի հետ միացնում են հուն. ἅλλομαι «ցատկել, ոստնուել, խոյանալ, առաջ նետվել», որոնցից ենթադրվում է հնիւ. sel «ցատկել»։

Հյ. յաղթիլ ըստ ձևի նույն է լատ. salto բայի հետ։ Մնում է պտնել կապը «ցատկել» և «յաղթել» նշանակությանց միջև։

Հենց լատիներեն բայը այնքան նախամասնիկնեի է օտանում և նրանց միջոցով այնքան է փոփոխում իր իմաստը, որ հասնում է արդեն «յաղթել» նշանակության։ Հմմտ. circumsilio «ամեն կողմից հարձակվել», exsilia «թշնամու վրա հարձակվել», resultatio «զինադրույթյուն», transilio «արհամարհել», insulto «թշնամին հարվածել, լողալու ժամանակ ալիքները հաղթարարել», assultatio «նվաճում, ընկճելը, հաղթել», exsultans «հաղթական»։

Եւ կարծում եմ, որ «յաղթել» իմաստը առաջանում է վրան նետվել իմաստից։ Երբ անդուսպ ձին ուղղււմ են ընկճել, քաջ հեծնորդը յոտենում է նրան, սանձից բռնում, մի քիչ այս ու այն կողմ հետը շարժվում և հանկարծ վրան նետվում։ Այլ ևս ձին հպատակվում է։ Նմանապես երբ ուղղււմ են դայր կամ արջը զսպել, վրան են նետվում, կոկորդից խեղդում, և նա հպատակվում է։ Այսպեսով «յաղթել» դառնում է մի պատկերավոր բացատրություն նման իր հոմանիշ «ընկճել» բառին, որ նշանակում է բառացի «ծռելի տակ դնել»։

Դալով հյ. յաղթիլ բայի մեջ մտած է > ք ձայնին, պետք է քնակա-նաբար ընդունել աճական։ Լատիներեն sallo—salto ձևի մեջ t համարվում է սաստկական։ Հայերենում երևան հանելով t աճականը, կարելի է այժմ մտածել որ նաև լատ. t աճական է։ Walde-Pokorny 2, 505 sel- արմատի տակ հիշում է հւլ. slepati, slepati «ցատկել», իբր կադմված p աճականով. բայց կասկածական է։ Եթե հայերենում t իբրև աճական ընդունենք, սլավական բառն էլ կազատվի կասկածականից։

18. ՅԵՒ

Ց բաղաձայնով սկսվող բառերով զբաղվելու ժամանակ, Walde-Pokorny բառարանում, հտ. 2, էջ 587 պատահեցի հնիւ. sk'er- «կղկղանք, կըղկղել» արմատին, որի ժառանգներն են սլով. sera, sbrati «կղկղել», ոււս. cop «աղբ», անգ. sairya «աղբ», պհլ. sargon և պրս. sargin «աղբ», հուն. σκῶρ, σκατός «կղկղանք», հիւլ. skarn, անգլոս. scearn, ֆրիդ. skern, գերմ. scharn «աղբ», լատ. muscerda «մկան աղբ», sucerda «խոզի աղբ», bucerda «կովի թրիք», ovicerda «ոչխարի աղբ», որոնց մասին խոսում է նաև Ernout-Meillet, էջ 171։

Հայերենը ձևով և իմաստով նույն է այս բառերի հետ և ոչ մի բացատրության պետք չունի։ Կարևոր է միայն անգրադառնալ վերջաձայն n-ի վրա, փոխանակ n-ի։ Այս էլ կամ առաջանում է s աճականով հնիւ. sk'ers ձևից և կամ ավելի ճիշտ՝ տե՛ս բառի նմանությամբ վերջաձայնը՝ սասակացնելով։

19. ՀԻՒԱՆԻ

Լեզվարանները այնքան շատ աշխատանք են կատարել հայերեն բառերի համեմատությունը, որ բոլոր պարզ աչքի ընկնող և հայտնի ստուգարանությունները կատարվել վերջապես են, և մեզ մնում է միայն ամենից զգուշոր աշխատանքը:

Այդ կարգի բառերից մեկն է հիւանդ բառը, որի համար տրված բոլոր բացատրությունները արդեն մերժված կամ մերժելի են (տես Արմ. քո., հա. Գ, էջ 315):

Առաջին հայացքով հիւանդ պետք էր համարել հնագույն *եկւանդ ձևից, ըստ որում նախալանկերի անշեշտ ի առաջանում է հ-ից (օր. սիրել < *սիրել): Բայց աչքի առաջ ունենանք հայերենի այն կանոնը, որով և նախաձայնից հետո ի մասնավորը չի փոխվում (ինչ. եիմգ—հիմգերորդ և ութե *հնգերորդ). ուստի՝ հիւանդ էլ մնում է հիւանդ և պետք չէ ևնթադրել *հիւանդ նախաձևը:

Դիտենք նաև, որ բառամիջում, մասնավորից հետո և առաջանում է ր-ից (ինչ. epi և septu > երս), իսկ բառասկզբի հ ընդհանրապես ծագում է ր-ից (ինչ. pater > հայր): Այսպես պարզվում է մեր աչքին հնի. pen արմատը հիվանդություն կամ դավա նշանակությամբ:

Այսպիսի մի արմատ գոյություն չունի Walde-Pokorny բառարանում: Հունարենում ունինք πενοζ հցավ, πορευ հցավ կրկի, դավ քաշել, πορευεω τήν κεφαλήν «կուխը ցավել, գլխացավով տառապել», πορευεω τὰ πλάτη «ըստ որում ցավել», πενοζ: «տառապել, շարժարանքով աշխատել» են: Այս բոլորը ներկայացնում են մեր դուրս բերած pen արմատը, իր միջին մասնադարձով միասին, որ է pen. հայերենում ունինք այժմ ստորին մասնադարձը՝ pn > pan.

Գալով հայերենի վ վերջաձայնին, մենք գիտենք, որ վ բաղաձայնը ոնդականից և ր-ից հետո ներկայացնում է պարզ խուլ 1 (ինչ. anti > անդ «չեմք», anti ընդ, entero ընդերք, k'wonta սկուռնդ «շուն» mrio > մարդ են): Այսպեսով չյ. հիւանդ դառնում է հնի. pen հցավ քաշել, հիվանդ լինել արմատի սովորական կրկնական անցյալ դերբայի ձևը pi-pn-to (հմտ. լտ. gi-gnō, հուն. γ-γνομε: «ծնանել» gn արմատից):

Հունարեն πενομα, πονοζ բառերը Pedersen և Persson մեկնել են հնի. spen «հյուսել» արմատից, իբրև թի «հյուսել» մի զգուշորին կամ նեղացուցիչ աշխատանք լինելու: Այս մեկնությունը ընդունված չէ (տես Walde-Pokorny 2, 661): Վերջինս մերժելով այդ մեկնությունը, ասում է, որ ավելի շուտ պետք է վերադրել ստրկական աշխատանքին. ինչպես օր. ուս. работа «աշխատանք», որ ծագում է naб «ստրուկ» բառից, նույնպես և դերմ. Arbeit «աշխատանք»: Առաջարկում է այս իմաստով որոնումներ կատարել:

Walde-Pokorny հունարենի նրկա առումների մեջ (շարժարվել, տառապել, ցավազնել) հիմնականը համարում է ուրեմն առաջինը, որից բուեց-նում է մյուս երկուսը: Բայց ըստ իս՝ նախնական նշանակությունը պետք է համարել «ցավազնել», որ երեք առումների մեջ ամենից ավելի նյութական է: Սրանից էլ բխում են մյուս երկուսը:

Առաջարկելով πενομα—հիւանդ համեմատությունը՝ մենք 1) տալիս ենք մի նոր ստուգարանություն, 2) ավելացնում ենք ընդհանուր բառա-

զանձի մեջ մի նոր արմատ, 3) մեկով ավելացնում ենք այն բառերի թիվը, որոնք հատուկ լինելով միմիայն հայերենին և հունարենին, շեղում են այս երկու լեզուների անձուկ կապը, որ վաղուց առանձին ուղադրության առարկա է դարձել:

20. ԿԵՂՏ

Հայերենի չմեկնված բառերից է:

Սլավական լեզուներում կան մի խումբ բառեր, որոնք իմաստով բոլորովին նույն են սրա հետ: Այսպես՝ հսլ. гадѣнь «կեղտոտ», ուսլ. гад, гадина «զզվելի», гажу, гадить «կեղտոտել, ապականել», гадкий «կեղտոտ, զզվելի», гадость «զզվելի բան», ուկր. hadyly s'a «զզվել», սերբ. gad «զզվանք» են: Այս բառերը լեզվաբանները կցում են հին անգլ. cwed «վատ, չար», նրգ. kat, kōl «անմաքրություն, կեղտ», լիթ. gė'da «ամոթ, անպատվություն», հայրուս. gıdan «ամոթ» են բառերի հետ (Berneker 289): Բոլորը միասին հանվում են հնի. g²odli-, g²edli- արմատից, որ Walde-Pokorny 1, 695 համարում է g²ou, g²u «աղբ, կղկղանք» պարզական արմատից անանցված՝ dli աճականով: Հայերենը կեղտադրում է g²ed-lo ձևը, որ կազմված է g²ed արմատից -lo- մասնիկով: հմմտ. հատկապես sed-lo ձևը, որ կազմված է ճիշտ նախորդի նման՝ sed- «նստել» արմատից՝ -lo- մասնիկով: Հայերենում նախ բաղաձայնները հաճախ տեղափոխվում են. այսպես neg²-ro > մերկ, meg²hri > մերձ, smug-ro > մուրկ, մրկել, snobhri > նուրբ, k'ubhro > սուրբ են: Վերի sed-lo > ետդ ձևի մեջ շրջում տեղի չի ունեցել, իսկ g²ed-lo > կեղտ ձևի մեջ կա:

21. ԽՈՒԴԱՓԻՐԻՆ

Սա մի նշանավոր կամուրջ է, որ դնվում է Արաքսի վրա՝ ոռոս-պարսկական սահմանում: Ահա թե ինչպես է նկարագրում Բարխուդարյանցը իր «Արցախ» աշխատության մեջ այս կամուրջը. «Խուտափիրին... երկու կամուրջ կա այստեղ — Վերին և Ներքին: Խիստ հնաշեն և համակ սրբառաշ քարով շինված է Վերին կամուրջն, որ ունի ինն աշք, որոց ոտքերն հաստատված են բնութեմտեղծ վեմ քարերի վերա: Աշքերի կամարներից կանդուն են չորսն և քանդված՝ հինգն: Իսկ Վարի կամուրջն հիմնարկված է նույնպես բնական վեմ քարերի վերա, որ ունի 15 աշք: որոց ոտքերն շինված են քարով և թաղերն թրծյալ աղյուսով և կրաշաղախ ցեխով» (էջ 62):

Նկարագրությունից երևում է, որ Խուտափիրինը բնական մի կամուրջ է, մարդու ձեռքով լրացրած: Մաղումը ժողովրդական բացատրությամբ դնում են պրս. 𐭠𐭣𐭥 Xuda «Աստված» և 𐭠𐭣𐭥𐭥𐭥 քսր «սուրբ» բառերից: Այս բացատրությունը բավարար չէ, որովհետև -իս մնում է առանց մեկնության:

Հիմնվելով այն ձայնական օրենքի վրա, որով տեղացիք (զարաբաղցիք, գանգեղուրցիք և մեղրեցիք) չունենալով ֆ բաղաձայնը, ոտար լեզուների այս հնչյունը վերածում են փ, հիշյալ բառը մեկնում ևս պրս. 𐭠𐭣𐭥𐭥𐭥𐭥 Xuda-aferin «Աստուծու ստեղծած, աստվածաստեղծ»:

Թրքական արչականքից հետո՝ Արաքսի երկու ափերին էլ պարսկերեն լեզուն վերացված է: Ուստի Խուտափիրին պարսկերեն անունը թրքական ներխուժումից ավելի առաջ է: